

5.4. 2012 թվականի մայիս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2012թ. մայիսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.4.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում: Մայիսին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մշտադիտարկում իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 145 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 43121 փորձանմուշ:

Երևան քաղաքի մշտական 5 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 478 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.2 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 15779, ծծմբի երկօքսիդի համար՝ 6188, ազոտի օքսիդների համար՝ 868 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 15 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 45 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Ապրիլ ամսվա համեմատությամբ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ:

Վանաձոր քաղաքի մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 186 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 188 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ:

Ալավերդի քաղաքի մշտական 2 դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի

երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 179 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5322, ծծմբի երկօքսիդի համար՝ 5321, ազոտի օքսիդների համար՝ 866 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտո-մատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 2.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառ-ման 18 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 147 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ:

Հրազդան քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 74 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 2.2 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.8 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 46 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 30 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.4 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.6 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 55 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5373, ազոտի օքսիդների համար՝ 952 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 52, 48 և 30 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 93 և փոշու 31 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի պարունակության որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 554 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է 3.3 անգամ թույլատրելի նորմայից բարձր, իսկ ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2012թ. մայիս

մգ/դմ³

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը		
	12-13	21	22
Ջրածնային ցուցիչ (pH)	7.21	7.30	7.56
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍիմ/սմ)	53.1	59.7	142.3
Սուլֆատ իոն	3.35	3.78	9.63
Քլորիդ իոն	0.27	0.45	0.79
Նիտրատ իոն	1.90	2.27	3.49
Ամոնիում իոն	1.72	2.37	0.43

5.4.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում: Մայիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 39 գետերի, Արփիլճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 119 դիտակետերում: Վերցված 128 փորձանմուշներում որոշվել է 18-21-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2012թ. մայիս

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին, մգ/դմ ³	ԹԿՊ, մգ/դմ ³	ԹՔՊ, մգ/դմ ³	նիտրիտ իոն, մգN/դմ ³	ամոնիում իոն, մգN/դմ ³	սուլֆատ իոն, մգ/դմ ³
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	-	-	0.134	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	5.13	-	-	-	-	-
Դեբեդ	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	3.3	-	-	-	-
Տաշիր	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.036	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	3.2	-	-	0.559	330.6
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	-	4.8	-	-	-	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	3.9	-	-	-	-
	17	ք.Իջևանից 1 կմ վերև	-	3.8	-	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	-	4.8	-	0.026	-	-
Գետիկ	20	Գետաբերան	-	4.6	-	-	-	-
Արաքս	25	Սուրմալու գյուղի դիմաց	-	-	38	-	-	-
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	3.57	-	-	0.090	-	-
	29	ք.Ազարակից 2 կմ հարավ	-	-	40	0.045	-	145.0
	30	ք.Ազարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	4.1	-	0.056	-	147.8
Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	-	3.6	-	-	-	-
	32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	-	4.3	-	-	-	-
	33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	-	4.2	-	-	-	-
	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	-	7.6	-	0.121	0.858	-
	35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	46	-	-	-
Կարկաչուն	38	Գետաբերան	3.52	3.2	-	0.571	1.114	169.7
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	5.64	-	58	0.142	-	238.1
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	5.95	3.2	44	0.200	0.529	187.7
	42	Ռանչյար գյուղից 0.5 կմ ներքև	5.75	-	52	0.120	0.456	162.6
Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	-	-	-	0.052	-	-
	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	-	-	-	0.114	1.251	-
	45	ք.Աշտարակից 1 կմ վերև	-	3.2	-	0.037	-	-
	46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	-	3.9	-	0.143	-	-
	47	Գետաբերան	-	3.2	48	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները						
			լուծված թթվածին, մգ/դմ ³	ԹԿՊ, մգ/դմ ³	ԹՔՊ, մգ/դմ ³	նիտրիտ իոն, մգN/դմ ³	ամոնիում իոն, մգN/դմ ³	սուլֆատ իոն, մգ/դմ ³	
Գեղարոտ	49	Գետաբերան	-	-	-	0.161	-	-	
Հալավերդ	50	Փարայի գյուղից 0.5 կմ ներքև	-	3.8	-	0.062	-	-	
Հրազդան	51	Գեղամական գյուղի մոտ	-	-	44	-	0.430	-	
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	3.8	-	-	-	-	
	55	Դարբնիկ գյուղի մոտ	1.01	17.5	76	0.400	22.086	-	
	56	Գետաբերան	5.18	-	44	0.111	0.841	146.5	
Մարմարիկ	58	Գետաբերան	-	4.1	-	-	-	-	
Գետառ	59	Գետաբերան	3.49	5.6	78	0.279	0.969	220.5	
Վեղի	82	Գետաբերան	4.70	4.6	-	-	-	-	
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	4.42	-	-	-	-	-	
	85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	4.96	-	-	-	-	-	
	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	5.06	-	-	-	-	-	
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	4.84	-	-	-	-	-	
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	4.69	-	-	-	-	-	
Ողջի	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	5.58	-	-	-	-	-	
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	-	0.156	-	163.2	
Գեղի	98	Գետաբերան	5.76	-	-	-	-	-	
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	4.98	-	-	-	-	-	
	101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	-	-	-	0.051	0.879	-	
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	5.54	-	-	-	-	-	
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	5.63	5.5	-	0.235	5.843	-	
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	64	-	-	-	
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	-	3.8	-	-	-	-	
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	-	-	56	0.086	-	-	
Ագատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	-	3.6	-	0.212	0.965	-	
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	5.42	-	-	-	-	-	
Սևանա լիճ	115	Թերակղզուց 3.5 կմ դեպի արևելք	-	4	40	-	-	-	
	116	Թերակղզուց 70° ազիմուտով	-	3.5	-	-	-	-	
	117	Ձկնագետի գետաբերանի շրջանում	մակերևույթից	-	3.5	-	-	-	-
			20 մ խորքից	-	3.4	38	-	-	-
	118	Շորժա գյուղից 0.5 կմ հարավ-արևմուտք	-	3.3	-	-	0.413	-	
	119	Շորժա գյուղից 6 կմ հարավ-արևմուտք	մակերևույթից	-	3.4	-	-	-	-
			20 մ խորքից	-	-	34	-	0.409	-
	120	Արտանիշ գյուղից 2 կմ 135° ազիմուտով	մակերևույթից	-	3.3	-	-	-	-
			20 մ խորքից	-	3.4	32	-	-	-
	121	Փամբակ գյուղից 10 կմ 270° ազիմուտով, մակերևույթից	-	-	40	-	-	-	
	122	Փամբակ գյուղից 2.2 կմ 255° ազիմուտով, 20 մ խորքից	-	3.7	38	-	0.426	-	
	123	Փամբակ գյուղից 13 կմ 235° ազիմուտով	մակերևույթից	-	3.3	-	-	-	-
20 մ խորքից			-	3.2	32	-	-	-	
125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	-	-	47	-	0.409	-		
126	Արփա-Սևան ջրատարի ելքի մոտ	-	-	36	-	0.439	-		

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)		ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
				լուծված թթվածին, մգ/դմ ³	ԹԿՊ, մգ/դմ ³	ԹՔՊ, մգ/դմ ³	նիտրիտ իոն, մգN/դմ ³	ամոնիում իոն, մգN/դմ ³	սուլֆատ իոն, մգ/դմ ³
Սևանա լիճ	128	Երանոս գյուղից 15 կմ 90° ազիմուտով, մակերևույթից		-	3.5	-	-	-	-
	129	Երանոս գյուղից 24 կմ 90° ազիմուտով, 20 մ խորքից		-	3.5	-	-	0.447	-
	131	Չկալովկա գյուղից 7.5 կմ հյուսիս	մակերևույթից	-	3.2	-	-	-	-
20 մ խորքից			-	3.4	36	-	-	-	